Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 24-ի N 1036 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող երկրաբանական տեղեկության (այսուհետ՝ տեղեկություն) տրամադրման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների դիմաց վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Տեղեկությունը տրամադրվում է լիազոր մարմնի կողմից անվճար՝ համաձայն «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի: Տեղեկության անվճար տրամադրումն ապահովելու նպատակով թվայնացվում և լիազոր մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքում (այսուհետ՝ էլեկտրոնային կայք) տեղադրվում է ամբողջ երկրաբանական տեղեկությունը՝ բացառությամբ «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Էլեկտրոնային կայքում տեղադրված տեղեկությունը թարմացվում է լիազոր մարմնի կողմից յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ և բաց է ու հասանելի ցանկացած շահագրգիռ անձի համար:

3. Վճարովի են միայն լիազոր մարմնում առկա թվայնացված, ինչպես նաև չթվայնացված՝ տեղեկության տրամադրման հետ կապված մատուցվող ծառայությունները:

4. Լիազոր մարմնում առկա թվայնացված, ինչպես նաև չթվայնացված երկրաբանական տեղեկության տրամադրման հետ կապված ծառայությունները մատուցում է լիազոր մարմնի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

5. Տեղեկության տրամադրման հետ կապված ծառայություններն են՝

1) պատճենահանում և սկանավորում.

2) համակարգչային տպում.

3) ընթերցասրահում ֆոնդային նյութերի տրամադրում:

6. Տեղեկության տրամադրման համար մատուցվող ծառայությունների գնացուցակը փակցվում է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության ընթերցասրահի մոտ՝ տեսանելի վայրում:

7. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները տեղեկություն ստանալու համար գրավոր դիմում են լիազոր մարմնին:

8. Լիազոր մարմինը սույն կարգի 7-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է պահանջվող տեղեկությունը, իսկ արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների համար անհրաժեշտ տեղեկությունը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրվում է հարցման պահից 4 ժամվա ընթացքում:

9. Իրավաբանական և ֆիզիկական անձինք տեղեկություն ստանալու նպատակով դիմում են լիազոր մարմնի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ լրացնելով համապատասխան հայտ՝ համաձայն ձևի:

10. Հայտերը գրառվում են գրանցամատյանում, որի ձևը և վարման ընթացակարգը հաստատում է լիազոր մարմինը:

11. Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պահանջվող տեղեկությունը կարող է տրամադրվել միայն մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կանխիկ կամ փոխանցման միջոցով վճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Տեղեկության վերաբերյալ նյութերի տրամադրումն ու դրանց գաղտնիությունն ապահովվում է օրենքով սահմանված կարգով:

13. Տրամադրված տեղեկություն պարունակող փաստաթղթերի բնօրինակներից օգտվում են միայն այդ նպատակի համար նախատեսված՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության ընթերցասրահում:

14. Հայտատուի կողմից նյութերի վերադարձման պահին ստուգվում է նյութերի ամբողջականությունը, որից հետո «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողը գրանցամատյանում ստորագրում է վերադարձված նյութերի ամբողջականության համար:

15. Տեղեկության տրամադրման և պահպանության համար պատասխանատու է լիազոր մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև

Հ Ա Յ Տ

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հայտատու

Ֆիզիկական անձ _____
(անունը, ազգանունը, հայրանունը)

Իրավաբանական անձ_____
(կազմակերպության անունը)

_____

Պահանջվող տեղեկության անվանումը_____

Ստորագրությունը _____
(հայտատուի)